6. ՓԻՐ-ՎԱԼԻՆ

Մեկ զանկին մարդու մը իրեք տղա կէղնի։ Հ՝ըմնու պզտիկի անուն Փիր-Վալի կէղնի։ Էդա ախբըրտանքն է կէլնին կասեն իրարու.

— Մենք իրեք մեկ մարդու տղա ինք, պետք է իրեքիս լե՝ մեկ մարդու ախչիկ էղնի։

Կդնին ուրանց հոր վրեն։

Հեր կիգա, կտեսնա օր մեկ մարդու իրեք ախչիկ կա, կուզե, խալանմալան կկտրե, կիգա ուր տուն, օր առնե հարսնած, էրթա, բերե։

Կիգան օր զհարսներ վերցուն, առնին, էրթան, ճամբեն հ՝երկեն կէղնի, էլ ուրանց տեխ չըն հասնի, ձորու մը մեջ կզարկին զուրանց չադրներ, նստին։

Կզարկին չադրներ, կնստին։ Լուսուն կէլնին կտեսնան, օր ուրանց չորս բոլոր ահագին հ՝ուշապըմ փաթեր է, էկեր է զգլուխ դրեր վըր պոչին, պոչ վըր գլխուն ու նստի։ Որն օր կէլնի կէրթա դուրս, կտեսնա, կվախենա, կդառնա կիգա ուր չադրը, նստի։

Հարսնվորներ կդնին Փիր-Վալու պապուն, կասին.— Էդի քու պարտականութենն է, հ՝ելի հարցու էդ մարդուց տեսնանք հ՝ո՞րին է էկի զմըր բոլոր փաթի ու կանի, ի՞նչ կուզե։

Մարթն կէլնի կէրթա, կասե.— Աստծու անասուն, աստծու հայվան, ի՞նչ է քու հ՝ուզած, ի՞նչ կասիս, հ՝որի՞ն իս էկի, փաթի զմըր բոլոր։

Հ՝ուշապն կասե.— Բան չըմ ասի, զՓիր-Վալու կնիկ ընծի կթողեք, կելնիք, կէրթաք. օր չթողեք՝ զձի զմեն կկլում։

Ճար ուրանց կկտրի, կելնին զՓիր-Վալու կնիկ կթողին հ՝ուշապին ու կառնին զմեկել էրկու հարսներն ու կքաշվին կիգան։

Հ՚ուշապ կէլնի, կառնէ զՓիր-Վալու։ կնիկ ու կէրթա մտնի ուր հ՚էրի մեջ։

Հարսնած կիգա տուն։ Փիր-Վալին կտեսնա օր ուր կնիկ հետ ուրանց չէ, կէրթա թավլի դին սեյիսից կհարցու, կասե.—Սեյիս, իմ կնիկն հ՚ուր է։

Սեյիս կասե.— Չըմ գինա։

Կքաշե զխանջալն, կասե.— Ցամ զօղորդ կասիս, յամ զքու հոգին կկորցում։

Սեյիս կասե.— Փիր-Վալի, դլխուդ արևուդ մեռնեմ, զիս հ՚որի՞ կսպանիս, կանի ասեմ։ Էկանք ֆըլան տեխ, զարկինք զմըր չադրներ, լուսուն հ՚ելանք, տեսնանք օր հ՚ուշապըմ էկեր է զմըր բոլոր փաթեր է, ասեց՝ «զՓիր-Վալու կնիկ չթողնք հ՚ոդա էրթաք, զձի զմեն կսպանեմ»։ Ճար մի կտրավ, հ՚ելավ քու պապ զքու կնիկ թողեց հ՚ոնի, առավ զհարսնածն ու զուր էրկու հարս, էկան։

Փիր-Վալին դէդ օր լըսեց, քաշեց զուր ձին, կապեց զուր ճագեր, հեծավ զձին ու հ՚ընկավ ճամբախ, ինչ ճամբով օր էկած են, յալա յոլ ու բահվան էղավ, գնար

Գնաց, գնաց հ՚ուշպի հ՚էրի դուռ հ՚իջավ, հ՚ուշապ զգլուխ թալեց դուրս, օր զՓիր-Վալին տեսավ, ասեց.—Վա՜յ, դու բարով ու խերով էկար, էդա քու կնիկ, կէրթաս Սինամ թագավորի հեքիաթ ընծի կբերիս, կառնիս զքու կնիկն ու կէրթաս։

Էհ, Փիր-Վալին մտածեց. «Ջանըմ, Սինամ թագավոր հ՚ուր պիտի էղնի, ուր քաղաք դո՞ր է, հ՚ուր գտնամ»։ Հ՚ելավ, հեծավ զուր ձին ու հ՚ընկավ ճամբախ, գնաց։

Գնաց, աֆանդրմ, վեր-վերի սարըմ կեր, հ՚ըռաստ էկավ ծառու մը։ Տեսավ օր էդ ծառու վրեն բուն մը կեր, կապեց զուր ձին ծառ, քաշեց զուր կուլապ ուր գլուխ ու պառկավ քնավ։

Քնավ, շատ քիչ, խրժրրժում հ՚ընկավ անկաճ, խրռտավ, հ՚ելավ նստավ, տեսավ օր ահագին զըլամ մը փաթվեր է էդ ծառ ու կէլնի, ձագեր դրած ին հավար ու ֆիզա, կիլան, մամ ուրանց լե հոդ չէ։

Հ՚ելավ տեսավ օր զըլամ մը փաթվեր է, կէլնի ծառ, ջոպկեց զթուր, քշեց վրեն, մանդրեց էրեց թութուն, դխիրեց ծառու տակ, մեկ-էրկու կտոր լե թալեց ձրգերուն, էկավ քաշեց զուր կուլապ գլուխ, պառկավ քնավ։

Պառկավ քնավ։ Սահաթըմ վերջ հավորեկն էկավ, տեսավ օր սև բանըմ կա ծառու տակ պառկուկ, խիժ էրեց, քշեց վրեն։ Օր քշեց վրեն, ձագեր հ՚ելան հ՚առեջ, ասին.—Մերիկ, իշքե ծառու տակ ու խաթըր էրե մզիկ։

Հավքն օր աչքեց, տեսավ, օր ահագին հ'ուշապըմ, մանգրուկ լըցուկ է ծառու տակ ու մարդ պառկուկ, քնուկ։

Զըգերն ասին.— Մերիկ, էդա հ'ուշապ փաթվավ հ'ելավ ծառ, օր ուտեր զմզիկ, մարդ լե պառկուկ էր ծառու տակ, մենք խրժվրժացինք, զարթավ, հ'ելավ քաշեց զթուր ու զհ'ուշապն բերեց բրդեց լըցեց գետին, պառկավ քնավ։ Էդ մարդ օր չէղներ, հ'ուշապ զըմենքս լե կուտեր։

Զէդ օր լսեց հավորիկն, զուր թևեր բացեց, հով էրեց մարդու վրեն ու քնավ։

Սահաթե մը սորա, մարդ հ'իմցավ, տեսավ օր ահագին բանըմ վըր ուրեն հով էրեր է, վախեցավ։

Հավքն ասաց.— Մը վախենա, զէն բարիկն օր դու էրեր իս իմ ձրգերուն, ինչ օր էնեմ քզիկ, դրռ քիչ է։

Ասեց.—Աճայիպ ես ի՞նչ աղեկութեն էնեմ քզիկ, օր քու աղեկութենի տրկեն հ'ելնեմ, էդա քառասուն տարի է ձագ կհանեմ, կթողեմ կէրթամ, կդառնամ կիգամ, ձագ չըմ տեսնա, էդ հ'ուշապ կիգա, կուտե։ Հըմկա ըսպանեցիր, զիմ ձգեր խըլըսցուցիր, ասա տեսնամ, ես ինչ տղեկութեն էնիմ քզիկ, քու ավքյարն ի՞նչ է։

Փիր-Վալին ասեց.— Իմ խնդիրքն քու մոտեն էն է, օր զիս հ'իշուս Սինամ թագավորի քաղաք, ես չըմ գինա էրթա։

— Հայ հո,— ասեց հավքըն,— դժար բանըմ ասիր, ախըր պիտի էնեմ։ Ասեց.—Ընծիկ գտի յոթ դմակ, յոթ տիկ գինի առ ու նստի վըր իմ պառեկին, տեսնանք աստված ինչ կօղորմա։

Փիր-Վալին գնաց, առավ յոթ տիկ գինի ու յոթ դմակ, էկավ հ'ելավ հեծավ հավորեկի պառեկին։

Ասեց.—Աչ կդարձում՝ զիմ էրես զդմակ թալ, ճափ կթալիմ՝զդինին լից։

Բանձրցավ, շատ բանձրցավ, հավորեկն Փիր-Վալուն ասեց.—Աշխարք ի՞նչ խըդար կերևա քու աչքից։

Տղենն ասեց.—Մաղի մը՝ չափ։

Դըհա բանձրցավ, մեկ լե հարցուց, ասեց.—Աշխարք իմա՞լ կէրևա քինե։

Ասեց.— Բան չէրևա, հ'ըմեն ծանգառի ու մոռ կէրևա։

Մնաց մեկ դմակ ու մեկ տիկ գինի։ Բանձրցավ ու թալեց, հավորեկն զդմակ չխրֆլեց, փրթավ հ'ընկավ գետին։

Տղեն օր տեսավ դմակ փրթավ հ'ընկավ, թալեց զչախուն, կտրեց զուր թութակ, թալեց։

Արծիվ տեսավ օր քաղցր է, հասկցավ մարդու միս է, չկերավ, պահեց լեզվի տակ։

Աֆս.նդրմ, սկսավ ցածրանալ, խիժ հ՝իջավ Սինամ թագավորի քաղ-քի մեջ։

Ասեց.— Փիր-Վալի, հ՝ելի իմ թեբրից հատըմ փրթու, առ քու միտկ։ Եր օր քու նպատակ կատարվավ, զիմ թերուր կիտաս կրակ, ես կիգամ, կառնեմ զքզի իմ թևերուն ու կէրթամ։

Հավորեկ տեսավ, օր տղեն տեխեն չրկրռնա էլնե, ասեց.—Հ՝ելի զնա, հ՝որի՞ կանար։

Տղեն ասեց.— Դու գնա, ես սորա կէրթամ։

Հավորեկն ասեց.— Դու հ՝ելի գնա, ես սորա կէրթամ։

Տղեն ասեց.—Հավորեկ, քենե պահեմ, աստծուց ի՞նչ պահեմ։ էն վախտ օր զդմակ թալի, փրթավ հ՝ընկավ ցած, զիմ ճուռ կտրի, թալի. էղեր է յարա, չըմ կըռնա էրթա։

Հավկն հանեց լեզվի տկեն ղազի թութակն, դրեց վըր յարին ու թե-բուր զարկեց, լեզուն քսեց վրեն, տղեն հ՝ելավ, քելեց գնաց ու ինք լե թռավ, հ՝ելավ քաղքեն դուրս, բանձր տեխըմ նստավ։

Տղեն գնաց, հ՝ելավ Սինամ թագավորի հ՝առեջ։—Բարև։

— Աստծու բարին։

— Է՞հ տղա, դու հ՝որի՞ն իս էկի։

— Վալլահի, ես էկեր իմ դու զքու գլխու գալած ընծիկ պատմիս։

— Տղա, լաո,— ասեց,— որն օր էկեր է, զիմ գլխու գալած պատ-մեր իմ, ղդլուխ զարկեր իմ. ինչ պետքդ է հասկնաս, ափսոս իս, զքու գլուխ լե կզարկեմ։

Տղեն ասեց.—Չէ, ես էկեր իմ, օր զիմ գլուխ լե զարկիս, դու պատմե, զարկ։

— Մեղք քու վիզ, դը նստի, օր պատմեմ։

Տղեն նստավ ու Սինամ թագավոր սկսեց պատմել։

Ասեց.—Կտեսնա՞ս զէդա էրկու ագռավ, մեկն իմ Կյուլն է, մեկն Բլբուլն է, Կյուլն իմ կնիկն է, Բլբուլն իմ քուրն է։ Էդ էրկուս լե աշխըրքի մեջ ուրանց պես խորոտիկ չկեր։ Ես լե աշխըրքի մեջ ունենք իրեք ձի, մեկն քամուց էր, մեկն կրակից էր, մեկն ջրեն։ Լուսուն կէլնենք, կիտենք նալել, հ՝իրկուն կէրթանք պառկենք։ Լուսուն կէլնենք, տեսնենք օր մեկ մըխ չկա ուրանց օտաց տակ։ Հա,— ասեց,— իմ ճիկար կմըռմըռեր, կբերենք զմշկու գլուխ կզարկենք։ Էդ տեսակով մոտ հազար մարդու գլուխ զարկեցի։ Օրըմ լե էնպես միտկ էկավ վրես։ Ասի՝ «Ջանըմ, էդա ձիաննե-րու սապրպուն ես հազար մարդու գլուխ զարկեցի։ Ասի՝ կանի, գիշերըմ ես պիտի էրթամ հագնեմ սեյիսի հալվրներ, կանեմ իմ ձիաններու հ՝առեջ,

թող սեյիս հագնի զիմ հալվըներ, էրթա տուն»։ Հ՚իրկուն օր էղավ. էկա սեյիսի շորեր հագա, մտա ձիաննու թավլեն, սեյիս հագավ զիմ շորեր, գնաց տուն։ Սեյիս կէրթա տուն, կպառկի։ Կյուլ, Բլբուլ զքնու հրլուն կթալեն սեյիսի անկաճ, գինան ես իմ, կէլնին զուրանց շորեր կհագնեն, կապեն, զուրանկ կէնին չորպայե նախոշան։

Փիր-Վալի, սահաթ էրկուսին էկան թավլեն։ Քաշեցին խամչի մը իմ անկրճներուն։ Խամչի մը չէր, թոփրմ էր, զիրեք ձին տվեցին թամքել, կյամել, քաշեցի դուրս։ Մեկն հեծավ Կյուլ, մեկն՝ Բլբուլ, մեկ լե ընծիկ հեսցուցին ու առան զիս ուրանց մեջ։ Խամչի մը իմ անկրճներուն մեկ ձիուն, խամչի մը իմ անկրճներուն մեկ ձիուն ու քշեցին։ Տվեցին վերվենի սարրմ, օր բոլոր ճըրտու քար էր։ Հրմալ կրակ կիտեր ձիաննու օտներ, օր բըզոթ կթռներ, զմըր անկրճներ կիրիցեր։ Աղա, քշեցինք հ՚ելանք սարու գլուխ։ Սարու գլխեն կոռծանք ձորու մը մեջ, գացինք մըղարի մը դուռ հ՚իջանք։ Զիրեք ձիու գլուխ լե տվեցին իմ ձեռք, ուրանք գացին ներս։ Զիանք քրդնուկ, սազեցին պաղել, ես կմրսիմ ձիաննու հ՚առջև, զգլուխս էդ հ՚էրից էրի ներս, տեսա օր յոթ գլխեն դև հանդե ներս։ Գացին պառկան, հար ինչ քեֆ էրին, էրին։ Իրեք սահաթ թրմավ, մեկ լե էկան հեծան, առան զիս ուրանց մեջ ու դեհ, յալա։ Էկանք, էկանք մըր սարի դուռ հ՚իջանք։ Զձիանք քաշի թավլեն, ուրանք գացին տան դին։ Ուրանք գացին տան դին, ես գացի թավլեն, զիմ ձին քաշի, զդանկեր ժըրեցի ու հեծա։ Քշի գացի մըղարի դուռ հ՚իջա, զձին կապեցի փեստրմ, շոռբի զիմ թուր, գացի ներս։ Է, դև, էնքան Կյուլ, Բլբուլի հետ քեֆ էներ է, թլմշի ու քնի։ Թալեցի թուրրմ զգլուխ կտրեցի, զտըսնու շորս անկաճ լե կտրի, լըցի իմ հակուբեն, բերի թալի իմ ձիու վրեն ու հեծա։ Ըպա կնկա բաղդն է. կնիկ, ձին, ջուր յավլա մ՚էրթա։ Էկա հ՚իջա, զձին կապեցի։ Ես լե իմ սրտի կսկծեն առնեմ զհակուբեն էրթամ զէդ դնու անկաճ լե հանեմ հակուբից, թափեմ Բլբուլի հ՚առջև։ Զանկեվներ օր տեսան, վերցին վարոցրմ, զարկին իմ պառեկին։ Հմկա լե կցավա, ասին՝ «Կուզենք օր էղնիս սև բոճի մը»։ Էղա սև բոճի մը, հ՚ընկա քաղքի փողցներ։ Մեկ, էրկու, իրեք օր օլըրտա, շներ թափան վրես, խեղդեցին ու խեղդլկեցին, փախա գացի մտա սոխախրմ։ Փախա գացի մտա սոխախրմ, տեսա օր ախչիկ ու պառավրմ լվացք կէնեն։ Ախչիկն օր տեսավ զիս, ասեց. «Նանե, տես մեր Սինամ թագավոր»։ Մամն ասեց. «Հըշ կեցի, կտրուկ ծամ, օր հմկա Սինամ թագավոր զէդի լսեց, կտանե, զմըր գլուխ կզարկեն»։

Ախչիկն ասեց. «Հա, վալլահ, Սինամ թագավորն է, Կյուլն ու Բլբուլ սեր թափեր են վրեն, էրեր են հրմլա»։ Ախչիկն օր զէդի ասեց, գացի մտա ախչկա ճըվերու մեջ, զգլուխ կքսեմ ախչկա ձեռներու վրեն։ Գրկին

տուսն զիս, դացին աուն։ Առան զիս գացին սուն։ Ախչիկն ասեց. «Նանե, կըռնամ էնեմ հ՝առչին Սինամ թագավոր, վախենամ էրթա հ՝առչի վարոց չղարկն կնկան, էնդոնք զարկին, էնեն ուրիշ բան, էլ մըր վրեն չհանդիպի»։ Մամն ասեց. «Ախչի, գու լե զքու գիտցածն էրե». Բևրնց վարոցըմ զարկեց ախչիկ ընծի, ասեց. «Կուզեմ օր գու էղնես հ՝առչի Սինամ թագավորն»։ Էն սահաթին դառցա իսան։ Սր էզա իսան, ախչիկն ասեց. «Կէրթաս, հ՝առչին դըրբ դու զարկիս, ինչ օր խնդրես կկատարվի, օր չզարկես, էնդոնք զարկին, կէրթաս կորուստ, չէզնի թաղսիր էնիս»։ Ասի. «Հ՝որի թաղսիր պիտի էնեմ, հ՝առչին դըրբ ես կը զարկեմ»։

Հ՝ելա գացի։ Դացի մտա ներս, չխիմիշա զարկենք։ Վերուց Բլբուլ վարոցըմ զարկեց, ասեց. «Կուզեմ օր էղնիս էշըմ»։

Էղա էշ ու հոկուց դառցա։ Փիր-Վալի, դառցա, շներ հ՝ընկան ետևս, խածեցին ղճոնները, բռնեցին ճժեր, հեծան, շարշրեցին, հուրվեր կօլրտիմ, ալէն սոխախ չեմ կրռնա գտնա, էրթա ախչկա մոտ։ Շաբթե մը վերշ, աստծուց էր, հ՝ընկա սոխբխի լենք ու էրկենք, գացի։ Տեսա օր ախչիկն ու մամ լըվացք կէնեն։ Ախչիկ տեսավ, ասեց. «Նանե, հան, Սինամ թագավոր Հկավ»։ Մամն ասեց. «Հըշ կեցի, Սինամ թագավոր լսեց, կտանե զքու ծամ կկտրե»։ «Հա, վալլահի, նանե, Սինամ թագավորն է, Կյուլ ու Բլբուլ սեր թափեր են վրեն, էրեր ին էշ»։ Իմ ֆարասաթ տեղն է, զըմեն բան կհասկընամ, չըմ կրռնա խոսա, էղեր իմ էշ։ Գացի, զգլուխս քսի աղչկա էրեսին։ Ախչիկ վարոցըմ զարկեց, էմ լե էղա հ՝առչի Սինամ թագավոր։ Աման, ինչ օգուտ, հըմալ իմ էղի, օր հալե հ՝նկեր իմ, ճամբու հետ չըմ կրռնա քելի։ Բերին տարան զիս աղեկըմ ախչիկ ու մամ լողկցուցին, առան էկան, շաբաթըմ պահեցին։ Շաբթե մը վերշ ախչիկն ասեց. «Սինամ թագավոր, կէրթաս հ՝առչին վարոց դու կզարկես, ինչ օր խնդրես՝ կկատարվի. օր չզարկես, սեր կթափեն վրետ, կէնին ուրիշ բանըմ, չխնայես»։ Է՞հ, ինչ էնիմ, սիրտս վառեր է, էկա օր Կյուլն ու Բլբուլ նստած են։ Վարոցըմ էնտրան զարկի, մեկ լե էնտրան։ Ասի. «Կուզեմ որ դուք էղնեք մեկ-մեկ ագռավ»։ Էրկուս լե. կտեսնաս, էղած են մեկ-մեկ սև ագռավ. էդա Կյուլն, էդա լե Բլբուլն է։

Դառցավ ըստհաղ էն էրկուսին.—Կյուլ, Բլբուլ, հըմա՞լ է, հըմա՞լ չէ։

Զոռ ուրանց կէռեցին, զգլուխ ուրանց բանձրրցուցին.—Բալե՜, հըմալ է։

Ասեց.—Փիր-Վալի, իմ հեքյաթ թմավ, հ՝ելի դուրս, տեսնանք ինչ կէնես ու արի, զքու գլուխ զարկեմ։

Փիր-Վալին հ՝ելավ դուրս, զարծվի թեբուր տվեց կրակ։ Արծիվ էկավ, հ՝ելավ պառեկին։

Ասեց.— Զաստված սիրես, զիս Սինամ թագավորի փանջարի տըկով հ'ընցու։

Արծիվն առավ վըր թևերուն, էկավ Սինամ թագավորի փանջարի տըկով հ'ընցավ։

Ասաց.— Սինամ թագավոր, մանցի բարով, ես գացի։

Ասեց.— Զաստված սիրես, գու կանի։ Սաղ իկյան պետք չէ իմ գըլխու գալած դուրս հ'ելնի, կանի զիս թալեմ ծով, խեղդեմ, սորա գնա։

Էդոր քաղքի հ'առեջ ծով էր, ու քեռշկ ու սարայու չորս բոլոր լե բաղան։

Հ'ելավ կանավ վըր բաղնին ու ասեց. «Կյուլ Սինամ նեյ նադի, Սինամ կյուլի նեյ նասընս»։

Ու ղինկ թալեց մըջ ծովուն, խեղդվավ։

Առավ զարծիվ զՓիր-Վալին ու բանձրցավ, էկավ ուր ծառի տակ հ'իջուց։

Հ'իջավ ծառի տակ, տեսավ օր ուր ձին փըռչոտեր է, մազեր թիզըմ երկնցեր են։ Աղեկ արաբի թիմարըմ տվեց, զարկեց զթամք վրեն ու հ'ելավ հեծավ։

Հ'ելավ հեծավ զուր ձին ու տվեց զուր բար հ'ուշապ։

Էկավ հ'ուշպի հ'էրի դուռ հ'իջավ։ Տեսավ օր ուր հոր հարս հանդե հ'էրի գլուխ նստուկ ու հ'ուշապ նստեր է, ուրեն կիշքե։

Հ'ուշապ տեսավ օր Փիր-Վալին էկավ։

Ասեց.— Դու էկա՞ր։

Տղեն ասեց.— Հա, էկա։

— Օր էկար, նստե։

Նստավ։

Ասեց.— Բերի՞ր Սինամ թագավորի հեքյաթ։

Տղեն ասեց.— Հա, բերի։

Հ'ուշապն ասեց.— Օր բերիր, նստի պատմե։

Տղեն նստավ, ինչպես օր մենք գլխեն պատմեր ենք, հըմալ մեկիկ-մեկիկ պատմեց էդ հ'ուշապին**։

Տղեն մեկիկ-մեկիկ պատմեց, ու հ'ուշապ բացվավ։ Հեքիաթն օր խըլըսավ, մըր հ'ուշապն եղավ հրեղեն ախչիկըմ նստավ էդ տեխ, են լե սեր էր։

Փիր-Վալին զէդ օր տեսավ, հ'ելավ առավ զէրկու ախչիկ, հեծավ

---

* Կյուլը Սինամին ինչ արեց, թե Սինամը Կյուլին ինչ անի (Թ. Կ.)։

** Հեքիաթ պատմողն ալ կրկնեց, բայց երկարության պատճառով ավելորդ համարեցինք ձանձրություն պատճառել մեր ընթերցողներուն (Ս. Բ.)։

զուր ֆին, մեկ-մեկ ձի լե գտավ, հեսցուց զախչկներ, քշեց ու էկավ ուր հոր քաղաք։

Էկավ հասավ, ջուհապ գնաց հոր՝ չասիս թե՝ Փիր-Վալին առավ զուր կնիկ ու ախչիկըմ ուրիշ, էկավ։

Հ՝ելավ առավ զուր էրկու տղեն, ժողվեց զուր մարդիկ, գնաց հ՝առեջ, բերեց հ՝իշուց։

Բրռնեց հարսնեկ, յոթն օր, յոթ գիշեր զարկին ու խաղցան։

Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնեք ձըր մուրազին։

Ճստծուց հ՝իշավ իրեկ խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե անկաճ էնողին։